ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ՋՈՒՋԵՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ

1974 թ. աշնանը, Նոյեմբերյանի շրջանի Ջուջևան գյուղի անասնապահական դոմերի մոտ, ջրաշինարարական աշխատանքների ժամանակ, բացվեցին մ. թ. ա. I հազարամյակի մի քանի դամբարաններ, որոնք հնագիտական հետաքրքրություն են ներկայացնում։ Այդ դամբարանադաշտը առաջներում էլ հայտնի էր մ. թ. ա. III—I հազարամյակների և վաղ հայկական ժամանակաշրջանի հարուստ հուշարձաններով։ Դամբարանադաշտի մոտ է գտնվում այսպես կոչված Արամի բլրի կիկլոպյան ամրոց-բնակատեղին։ Արամի բլրի հարավային ժայռոտ լանջը հատում է ասֆալտապատ ճանապարհը, որը ամրոցը բաժանում է դամբարանադաշտից։ Վերջինս իր լայնությամբ ձգվում է 200 մետր դեպի հարավ և ավարտվում Շորվանի ձորով հոսող գետակով։ Հնադարյան այդ դամբարանադաշտը հետաքրքիր է թաղման բազմաձևությամբ և նյութական մշակույթի հուշարձաններով[1]։

Նորահայտ դամբարաններից 1974 թ. գտնվեցին փայտե նավակի մանրանմուշ, բրոնզե, երկաթե դանակներ, զարդեր և խեցեղեն։ Քարարկղ հիշեցնող այդ դամբարանի երկարությունը 150, իսկ լայնությունը՝ 120 սմ էր։ Այն շրջափակված էր մի քանի սալաքարերով։



Նկ. 1

Դամբարանի մեջտեղ առարկաների մեջ առավել ուշագրավը բրոնզե կացինն է, որն իր

1 Տե՛ս Ս. Ս. Ջիլինգարյան, Ջուջևանի դամբարանադաշտի վաղ բրոնզեդարյան հուշարձանները, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 1, նաև նույնի՝ Վաղ հայկական հուշարձաններ Ջուջևանի դամբարանադաշտում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 2։



Supplement I

փորագիր պատկերներով և գծանախշերով, որքան մեզ հայտնի է, իր զուգահեռը չունի Հայաստանում։ Կացնի (տախտ. I, 4) երկարությունը 17, սայրի լայնությունը՝ 5,6 սմ է, ունի օվալաձև կոթաո, արտահայտված ելուստավոր գլուխ՝ հարվածելու համար։ Կոթաոի վրայով անցնում են փոսիկներ, որոնք կացնին տալիս են ամրություն և թեթևություն, իսկ միջին մասում կան ռոմբաձև գծապատկերներ։ Կացնի գծապատկերները նույնությամբ կրկնվում են երկու կողմում էլ, իսկ սայրի կողմում պատկերված է ձի հիշեցնող ֆանտաստիկ կենդանի



Նկ. 2

(նկ. 1)։ Կացնի սայրը գործածված է։ Հավանաբար կացինը, բացի մարտական զենքից, եղել է նաև աշխատանքային գործիք։ Ջուջևանի նորահայտ կացինը ընդհանուր նմանություն ունի Հայաստանում գտնված կոլխիդա-կորանյան կացինների երրորդ տարբերակին[2]։ Այս կացինների ավելի մերձավոր օրինակները արտադրվել են մասնավորապես Արևմտյան Վրաստանում[3]։ Ջուջևանի կացինն ավելի շուտ հիշեցնում է կոլխիդա-կորանյան այն տիպը, որի արտադրության կենտրոնը, ըստ Հ. Մարտիրոսյանի, պետք է լինի Ռղիբյան Աբխազիան և հետո միայն Հյուսիսային Օսեթիան։

Դամբարանում հայտնաբերված զենքերից ուշադրության արժանի է նաև երկաթե մեծ դաշույնը, որը, ցավոք, խիստ քայքայված է (տախտ. I, 2, 3, 6)։ Նրա շեղբի մեծ բեկորի երկարությունը 13, լայնությունը՝ 6 սմ է, բրոնզե պատյանի մեկ հատվածի լայնությունը 6, իսկ երկարությունը՝ 12 սմ է (տախտ. I, 5)։ Թաղվածը հավանաբար զինված է եղել նաև երկաթե երկար նիզակատիպ զենքով։ Դամբարանում հայտնաբերվել է բրոնզե մի պատյան 28 սմ երկարությամբ (տախտ. I, 1), որի մեջ պահպանվել էր խիստ քայքայված երկաթե շեղբ։ Հայտնաբերվեցին նաև բրոնզե և երկաթե մի քանի ապարանջաններ։ Կանացի կմախքի մոտ գտնվեցին սարդիոնից պատրաստված ուլունքներ, որոնց տարբերակներից շատ են հայտնաբերվել նույն դամբարանադաշտի ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջանի թաղումներում։ Դամբարանադաշտում գտնված կաշվի ծվեններից կարելի է ենթադրել, որ թաղվածն ունեցել է նաև կաշվե լանջապանակ։

Խամբարանը հարուստ էր խեցեղենով, որի մի մասը ջարդված էր, քայքայված, անվերականգնելի։ Լավ պահպանվածներից են երկու խոշոր, գնդաձև գավերը։ Նրանցից մեծը (տախտ. I, 7) ունի սև գույնի, ակոսավոր բռնակ։ Նրա պարագիծը 23, իսկ բարձրությունը՝ 29 սմ է, գեղեցիկ պոռունկավոր հատակի տրամագիծը 8 սմ է։ Գավի իրանի կենտրոնով անցնում են միմյանց զուգահեռ ակոսաձև նախշեր, որոնցից դեպի հատակն են իջնում ճառագայթաձև խիտ գծեր։ Նույնպիսի նուրբ ու բարակ, անփայլ մակերես ունի փոքր գավաթը (տախտ. I, 8), որի պոռունկավոր հատակի լայնությունը 8 սմ է։ Վզի տակից, համաչափ հեռավորությամբ անցնում են ուռուցիկ երեք նախշեր։ Գավերից երրորդը (տախտ. II, 2) նույնպես ունի ակոսաձև հանվածքով բռնակ։ Հաջորդ խեցանոթը սև գույնի մի թասիկ է, փայլուն հաստ մակերեսով։ Նրա բարձրությունը 8 սմ է, իսկ բերանի լայնությունը՝ 11 սմ (տախտ. II, 1)։ Համեմատաբար հաստ պռունկներ ունի քրեղանը (տախտ. II, 3), որի բերանի լայնությունը 20, իսկ խորությունը՝ 6 սմ է։ Քրեղանի մեջ գտնվեցին թռչունի, ոչխարի և ձկան ոսկորներ։

Դամբարանային նյութերի մեջ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում կաղնու փայ-

---

[2] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 123—125։

[3] А. А. Нессен, Из истории древней металлургии Кавказа, 1935, էջ 121—130։

տից պատրաստված նավակը. այդպիսի իր, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ է գտնված Հայաստանի բրոնզեդարյան հնավայրերից։ Նավակը դրված էր դամբարանի վերին շերտում։ Բեկորներից (նկ. 2) և դամբարանի չափերից դատելով նավակի երկարությունը չէր կարող անցնել 150 սմ-ից, իսկ լայնությունը՝ 50 սմ-ից։ Մեծ բեկորի երկարությունը 72, իսկ փոքրինը՝ 40 սմ է, վերջնամասի հաստությունը՝ 7, իսկ առաջնամասինը՝ 3 սմ է։ Առաջնամասից մինչև կտուցը նավակն ունի սրունքաձև տաշվածք՝ գետի հոսանքի դիմադրությունը հաղթահարելու համար։ Կտուցի վրա նկատելի են անցքերի հետքեր, որոնք ծածկված են բրոնզե լարի քայքայված մնացորդներով։ Հավանաբար քթամասից անցկացված լարերով այն քարշ են տվել դետի վրայով։ Կարելի է ենթադրել, որ նման նավակներն օգտագործվել են փոքրիկ բեռներ տեղափոխելու, ձկնորսության և այլ նպատակներով։ Հնարավոր է, որ ծառի բնից պատրաստված նավակների ավելի երկար տեսակները օգտագործվել են նաև այլ նպատակներով։



Տախտակ II

Ջուլֆանի դամբարանադաշտից վերջերս գտնված հնագիտական նյութերը կարող են լրացնել տեղաբնիկների տնտեսության, զբաղմունքի և մշակույթի վերաբերյալ մեր ունեցած տվյալները։

Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

СООРУЖЕНИЕ О 4-х КОЛОННАХ В АНИ

Среди памятников, раскопанных академиком Н. Я. Марром в Ани, есть одно своеобразное сооружение, которое в силу своей малоизученности осталось как бы в стороне. Оно и впоследствии не стало предметом специального исследования. Н. Я. Марр писал: «... Это—загадочное здание..., откопанное в 1909 году. Впоследствии оно было обращено в церковь. Но первоначально оно состояло лишь из четырех толстых приземистых пилонов»[1].

[1] Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, М.—Л., 1934, стр. 53. Несовпадение годов здесь и ниже объясняется, по-видимому, тем, что раскопки в Ани начались в 1908 г., а описываемое сооружение было раскопано в 1909 г.